իջեցվում է **poroճի** *մեջ և դրվում ուղղակի նրա հատակին։ Նրանց հարմարեցրած են և իրենց* **խփիճէրը՝** *կափարիչները, որ ունենում են նաև կարասները, որոնց բերանները սակայն երբեմն կապվում են մի կտորով կամ կաշիով։* **Կճօճի** *կափարիչն ունենում է վերևից կանթ. ունկները և այդ կանթն անհրաժեշտ են ամանը* **poroճի** *մեջ զետեղելու և բարձրացնելու համար։ Տանտիկինը երկու երկաթե կեռ շամփուրները ձգելով ունկների մեջ՝ կարողանում է ուզածի պես տեղավորել ամանը* **poroճի** *հատակին։ Կճօճը զետեղվում է նաև արդեն վառված* **poroճի** *բերանին դրված* **թըռճարկաթի՝ poroճի** *երկաթի վրա։ Այս դեպքումն էլ կրակի վրա դնելու և վերցնելու համար ունկները հարկավոր են գալիս ավելի, քան եթե ամանն ունենար* **լյ̈ք՝** *պռունկը դեպի դուրս լայնացող հավելված։* **Կճօճի** *կողքերը սովորաբար զանազան չափով ուռուցիկ են լինում, շատ սակավ դեպքերում ուղղահայաց, ավելի սակավ վերևի կողմերով դեպի ներս սեղմված։*

Օշճակճէr. *կարասներից ավելի նեղ բերան ունեն, սակայն այն հաշվով, որ հնարավոր լինի ձեռքով մեջը մտնել։ Ոտքն անհամեմատ ավելի սուր է, ուստի հարկավոր է լինում նրանց պատին կամ որևէ հաստատուն իրին կռթնած կանգնեցնել։* **Օշճակճէrճ** *ունենում են անպատճառ մեկ ունկն*[3]*, որովհետև նրանցով կարելի է առհասարակ մթերքի տեղը հաճախակի փոխել և օրինակ՝ մածունը, յուղը բերել սարից։ Մեջը պահում են նաև չոր պաշար։*

Քթէշ՝ կթիշ[4]*. պիտի լինի շատ լայնաբերան, որպեսզի կթելիս կաթի չիթերից ոչ մեկը դուրս չթափվի։ Նույն նպատակով և պռունկը կարճ վզի վրայով որոշ չափով դուրս քաշած է լինում*[5]*։*

Զօrաթանճարի գմ̈վաթ. *մեծ տրամագծով է, կարճ կողերով և լայն հատակով աման է. մեծ մասամբ ունենում է երկու կողմից ունկներ և թանը հարելուց հետո մնացած հեղուկը դուրս ածելու համար պռնկի եզրին առաջ ծալած նեղ շրթնաձև կտուց ունի։*

Կօծ՝ *կուժ կամ* **տörակ**[6]*. անպատճառ ունկով է և ոտքը նեղ՝ սրածայրին մոտեցող։ Բարձրությունը շատ ավելի՝ երկու և ավելի անգամ մեծ է,* **փօrի** *տրամագծի համեմատությամբ. վիզը բարձր ու նեղ. բերանը՝* **ռէխը** *խցանում են կամ կտորով, կամ վրան կտոր փաթաթած փայտե խցանով։ Դրվում է միշտ գետնին՝ պատին, սյունին կամ որևէ հաստատուն իրին կռթնած։ Հաճախ գետնի մեջ նրա ոտքին համեմատ փոսիկ են անում և այնտեղ դնում կամ նրան դնում են փոսացրած քարի մեջ։*

Գռ̈իգռ̈իմ. *տարբերվում է* **կօծից** *ավելի լայն բերանով և մանավանդ ավելի լայն ոտքով և կարող է ազատ կանգնել իր* **ռոճի** *վրա։ Մեծ մասամբ նա շինվում է պղնձից և դրսի մակերեսը փորագրություններով զարդարվում, բայց կա նաև կավե* **գռ̈իգռ̈իմ:**

Կօլա՝ կուլա. *փոքր կուժ է, մեծ մասամբ այնպիսին, որ կարելի լինի սեղանին դնել. այդ պատճառով նրա հատակը ավելի լայն է լինում։*

Փաrշ. *կարճ և լայն է, փորն ուռուցիկ, անպատճառ ունկնավոր թաս։ Հաճախ գործ է ածվում. որպես հեղուկների չափ՝ գինու, օղու, ձեթի։ Ամենամեծը հավասար է 5* **գrվաճfի,** *այսինքն՝ 2 լիտրի։*

---

[3] *Սակավ դեպքերում՝ երկու։*

[4] *Կապանում* **սմ̈rիճջ:**

[5] *Գորիսում չեն ասում* **կօվկիր:**

[6] *Գորիս։*